

երէկ մեր քաջ սասնցիք ոստիկան մը իւր բոլոր բանակով բնաջինջ ըրին: Ուրեմն ինչ որ պետք է ընել, ի՞նչ որ կարելի է ընել մտածենք եւ եթէ ընելիք բան մը կայ ջանանք ի գործ դնել: Խնդրեմ, հոս ազատ համարձակ խօսինք, ես գծեզ ամենքդ կը ճանչեմ եւ գիտեմ եւ ամէն վստահութիւն քելնիմ ձեր վրայ եւ ամենուդ երաշխաւոր եմ, որ մեր գաղտնիքը գաղտնիք կը մնա, եւ գործելու համար միայն կը յայտնուի»:

Երբ նա վերջացուց իր խօսքը, քրթմնջիւն մը ելաւ բոլոր սրահին մէջ, ամէն ոք իւր ընկերին հետ կը խոսեր, բայց բարձրաձայն խօսող՝ կարծիք յայտնելու համարձակող ոչ ոք չէր երեւեր:

Յովնան եւ Գուրգէն լուռ կը կենային եւ բերան չէին բանար: Իսկ Աշոտ տեսնելով վիճակը՝ դարձաւ յանկարծ այս երկուքին՝ «Դուք,— ըսաւ,— ամենեւին բան՝ առաջարկութիւն չունի՞ք ընելու»:

— Իմ առաջարկութիւնս երկու օր առաջ լսեցիք այդ մեծ ժողովքին մէջ. ես կը յուսայի, որ եկեղեցական իշխանութիւն գլուխ կանգնելով ազգին կրնար հրաշքներ գործել նա չուզէր շարժիլ. դուք էլ կարելի է իրաւունք ունիք այս իշխանագուն երիտասարդութեան վրայ յոյս դնելու եւ փրկութեան նշոյլ մը փնտրելու: Ես այստեղ այս ժողովքիս մէջ, անյարմար անձ մը կը գտնեմ ինքզինքս, ոչ իշխանագն եմ եւ ոչ երիտասարդ. լռութիւնը իմ բաժինս ուրեմն պետք է լինի:

— Յովնա՛ն եղբայր, երկու օր առաջ այն ժողովքին մէջ, ուր սւտենաբանեցիք, կարծեմ թէ նոյնպէս իշխանագն չէիք» եւ ժողովքը կաթողիկոսի ու մեծ նախարարաց ժողովք էր:

Առանց այս խօսքերուն հեզնական մասին ուշադրութիւն ընելու, միամիտ հանդարտութեամբ պատասխանեց Յովնան.

— Կարելի է ես խաբուեցայ եւ համարձակեցայ խօսելու սոսկական ռամիկ մը, վասնզի ակեզարդ կաթողիկոս մը հոն նախագահ կը տեսնէի ժողովքին, եւ այդ կրօնական գլուխը կարծեի թէ ինձի պէս կը հասկնար Լուսաւորչայ ժողովուրդը՝ ինչպէս առաքեալը կը կարծե՛